ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2024թվականի N 147

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2010 թվականի հունվարի 12-ի «Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության կարգը սահմանելու մասին թիվ 07 որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թվականի փետրվարի 05-ի
№ 147 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգով կարգավորվում են համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպման հետ կապված հարաբերությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելությանը մասնակցելու, համայնքին առնչվող հարցերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելությունը կանոնակարգում և ղեկավարում է համայնքի ղեկավարը, իսկ նրա բացակայության ժամանակ տեղակալը կամ աշխատակազմի քարտուղարը:

Համայնքում քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է համաձայն սահմանված ժամանակացույցի՝ յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-ին:

Քաղաքացիների ընդունելությունն ապահովում են համայնքի ղեկավարի տեղակալը և աշխատակազմի քարտուղարը:

Ընդունելության կարգը փակցվում է համայնքի ղեկավարի նստավայրի հայտարարությունների ցուցանակի վրա, տեսանելի վայրում:

2.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Ընդունելության համար քաղաքացիների գրանցումը կատարվում է քաղաքացիների սպասարկման գրասենյակում /ՔՍԳ/ կամ հեռախոսազանգի միջոցով:

Ընդունելությունների մատյանում գրանցվում են ընդունելության օրը և ժամը, քաղաքացու անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, ներկայացվող հարցը, որից հետո նրան տրվում է ընդունելության թերթիկ՝ հերթական համարով:

Ընդունելությանը կարող են մասնակցել ինչպես նախօրոք համայնքի ղեկավարի ընդունելությունների մատյանում գրանցված, այնպես էլ գրանցվել չհասցրած, բայց շտապ լուծում պահանջող հարցեր ունեցող քաղաքացիները:

Ընդունելությունների մատյանում գրանցումն իրականացնում, ընդունելության ժամանակ հանձնարարականների կատարման ընթացքին հետևում և արդյունքներն ամփոփում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Համայնքի ղեկավարի ընդունելություններին մասնակցում են համայնքի ղեկավարի

տեղակալները, խորհրդականները, օգնականները, աշխատակազմի քարտուղարը, բաժնի պետերը, ըստ անհրաժեշտության նաև այլ աշխատակիցներ:

Ընդունելության ժամանակ բարձրացված հարցերը կարող են լինել գրավոր կամ բանավոր, որոնց կարող են տրվել բանավոր պատասխաններ և պարզաբանումներ, իսկ անհրաժեշտության դեպքում գրավոր պատասխաններ՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Եթե քաղաքացին բարձրացնում է նախօրոք չգրանցված հարցեր առանց գրավոր հիմքի, որոնք պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություն, ապա նրան առաջարկվում է խնդիրը ներկայացնել գրավոր, որի պատասխանն ուղարկվում է մեկ ամսվա ընթացքում:

Լրացուցիչ ուսումնասիրություն չպահանջող դիմումներին պատասխանվում է 15 օրվա ընթացքում:

Ընդունելության ավարտից հետո կատարվում է բարձրացված հարցերի և տրված հանձնարարականների վերլուծություն:

Ընդունելությունների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան յուրաքանչյուր եռամսյակ՝ ըստ վերջինիս կողմից սահմանված ձևաչափի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2024թվականի N 148

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՑԱՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, և հիմք ընդունելով Լևոն Էդվարդի Ալեքսանյանի և Ժորա Վանուշի Հովհաննիսյանի 2023 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը, <<Կոտայքի մարզ>> նոտարական տարածքի նոտարի կողմից 2006 թվականի հունիսի 22-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 2835, ժառանգական գործ թիվ 5220, 1990 թվականի մարտի 20-ի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023SGJSB6 ծածկագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Լևոն Էդվարդի Ալեքսանյանին և Ժորա Վանուշի Հովհաննիսյանին պատկանող Հրազդան քաղաքի Ջրառատ 260 հասցեում գտնվող 2484.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 69.28 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ կառուցված 41.40 քմ արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, ինքնակամ կառուցված 74.15 քմ և 63.60 քմ արտաքին մակերեսներով անասնաշենքերը, ինքնակամ կառուցված 21.56 քմ արտաքին մակերեսով խորդանոցը, ինքնակամ կառուցված 28.04 քմ արտաքին մակերեսով հացատունը:
2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3.Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված ամառային խոհանոցը, ինքնակամ կառուցված անասնաշենքերը, ինքնակամ կառուցված խորդանոցը, ինքնակամ կառուցված հացատունը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4. Ինքնակամ կառուցված բնակելի տան, ինքնակամ կառուցված ամառային խոհանոցի, ինքնակամ կառուցված անասնաշենքերի, ինքնակամ կառուցված խորդանոցի, ինքնակամ կառուցված հացատան պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան